ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 3492

« 02 » մայիսի 2023թ.

ԼԱՅԹԻՆԳ ԳՐՈՒՊ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
ԳՈՌ ՄԱՏԻՆՅԱՆ ՅՈՒՐԻԿԻ Ա/Ձ-ԻՆ
ՌՈԿ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Լայթինգ Գրուպ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) նշված է, որ Լայթինգ Գրուպ ՍՊԸ-ն հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ: Հայտում առկա է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.2-ը, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: Լայթինգ Գրուպ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը:
- 7-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նկարագրերում բացակայում են հրավերով նախատեսված «Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին:» և «Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և փաթեթավորված, տեխնիկական բնութագրում նշված պարամետրերի մակնշմամբ:» պայմանները:

ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չէ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• Հավելված 1-ին վերաբերող տեղեկատվության մեջ, ինչպես նաև դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրի փոխարեն նշված է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/84» ծածկագիրը,

• դիմում-հայտարարության առաջին նախադասությունում սխալ է նշված պատվիրատուի անվանումը՝ «Դատական դեպարտամենտ»-ի փոխարեն նշված է «Երևանի քաղաքապետարան», ինչպես նաև eauction.armeps.am համակարգում նշված տեղեկատվության համաձայն ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ն

մասնակցել է ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժիններին, այն դեպքում, երբ հիշյալ նախադասության մեջ նշված է հետևյալ չափաբաժինը՝ «1»,

• դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, լրացված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը (լրացված է մասնակցի հայերեն անվանումը և կազմակերպաիրավական տեսակը),

• դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,

• դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գոռ Մատինյան Յուրիկի Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• դիմում հայտարարության երրորդ նախադասությունում գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական, ինչպես նաև նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

• դիմում հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը:

ՌՈԿ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) նշված է, որ ՌՈԿ ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Հայտում առկա է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված 1.2-ը, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: ՌՈԿ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **մայիսի 03-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788